

ԱՐՇԱՄ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ

ՕՊՈԶԻՑԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

IV

ԴԱՀԼԻՃԻ ԱՌԱՋԻՆ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ԿՈԱԼԻՑԻԱՆ

Հանրապետութեան առաջին շրջանի քաղաքական կեանքի բովանդակութիւնն ու հետագայ ընթացքը հասկանալու համար հարկաւոր է մի քանի ճշտումներ անել այն վարչակարգի (ռեժիմի) նկատմամբ, որ ստեղծւեց մեր երկրում 1918 թւի աշնանը: Հայաստանը, ինչպէս յայտնի է, սկսեց իր պետական կեանքը, առանց զբաւոր սահմանադրութեան: Չունէինք մենք նաեւ հնուց աւանդւած ու քաղաքական գործիչների իրաւագիտակցութեան մէջ արմատացած անգիր սովորոյթներ, որոնցով կարողանայինք առաջնորդել պետութեան բարձրագոյն մարմինների փոխարարերութիւններն ու իրաւասութիւնների սահմանները ճշտելու համար: Եւ չնայած դրան, մենք երբեք վէճ չունեցանք այն հիմնական օրէնքների (Սահմանադրութիւն) մասին, որ պէտք է գործէին Հայաստանում ու առանց որեւէ դժւարութեան յաջողեցանք փոխադարձ համաձայնութիւն մշակել որոշ սկզբունքների վարչակարգը: Համաձայն լուծեամբ ընդունւած այդ սկզբունքների, Հայաստանը յայտարարեց որպէս Դեմոկրատական Հանրապետութիւն եւ ունեցաւ պարլամենտարական վարչաձեւ: Այդ վարչաձեւը սակայն տարբերեց այն դասական պարլամենտարիզմից, որ գոյութիւն ունի այսօր Անգլիայում, Ֆրանսայում եւ մի քանի ուրիշ երկրներում: Առաջին եւ հիմնական տարբերութիւնը առաջ եկաւ նրանից, որ Հայաստանը, անդրկովկասեան միւս հանրապետութիւնների նման, չունեցաւ նախագահ: Պետութեան գլխի բոլոր իրաւաների նման, չունեցաւ նախագահ: Պետութեան գլխի բոլոր իրաւասութիւնները մնացին Հայաստանի խորհրդի ձեռքում, որով այս սովորութիւնները մնացին Հայաստանի խորհրդի ձեռքում, որով այս սովորութիւնները օրէնսդրականից զատ ստանձնեց նաեւ մի քանի

վարչական ու դատաստանական փունկցիաներ: Ամենադժխաւորը դըրանց մէջ կառավարութիւն կազմելու պաշտօնն էր, որ պարլամենտական երկրներում պատկանում է Հանրապետութեան նախագահին կամ սահմանադրական միապետին, իսկ Հայաստանում դարձաւ Խորհրդարանի սեփականութիւն:

Վարչապետից բացի, Հայաստանի Խորհուրդը իրեն վերապահեց նաեւ պետական վերահսկիչի ընտրութեան իրաւունքը, ենթարկելով իրեն միաժամանակ վերահսկողութեան ամբողջ գործը: Պետական վերահսկողութիւնը, ինչպէս ասւած է հետագայում հրատարակած օրէնքի մէջ, դարձաւ «Պարլամենտի Օրգանը», իսկ վերահսկիչը՝ «պատասխանատու միայն Պարլամենտի առաջ»: Հայաստանի Խորհրդին պատկանեցին նաեւ միւս բոլոր իրաւունքները, որոնք պարլամենտական երկրներում վերապահւած են պետութեան գլխին: Յիշենք դրանց կարգին պետական բարձրաստիճան պաշտօնեաներին պաշտօնի մէջ հաստատելու, դատապարտեալներին ներում շնորհելու կամ պատիժը մեղմացնելու եւ ուրիշ այսպիսի մի շարք իրաւունքներ:

Այս ամէնից զատ, Հայաստանի Խորհուրդը շատ յաճախ հանդէս եկաւ, որպէս գործադիր մարմին ու իր յանձնաժողովների միջոցով տնօրինեց զուտ վարչական բնոյթ կրող գործեր, ինչպէս են՝ քուբրայի եւ վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքաւելու, ժողովրդի պարենաւորման, գաղթականների խնամատարութեան, քաղաքացիական ազգաբնակչութեան գինաթափման եւայլն գործերը:*)

Բացի վերոյիշեալ իրաւունքներից, Հայաստանի Խորհուրդը, կարելու դեր ունեցաւ նաեւ երկրի արտաքին քաղաքականութիւնը վարելու մէջ: Յ. Քաջազնունու առաջին դահլիճը արտաքին յարաբերութիւնների բնազաւառում ոչ մի կարելու քայլ չարաւ, առանց աւագների խորհրդի (սենիօրեն կոնվէնտ) կամ Փրակցիաների խառն ժողովների (անպաշտօն) կարծիքն առնելու:

Ինչ վերաբերում է օրէնսդրական գործունէութեան, նաեւ այդ ասպարէզում Հայաստանի Խորհրդի իրաւասութիւնները եղան շատ աւելի լայն, քան այն, որ ունեն պարլամենտական երկրների համապատասխան մարմինները: Խնդիրն այն է, որ մենք ոչ մէկ պատրաստի ժառանգութիւն չունէինք ստացած անցեալից եւ «ամէն բան, — ինչպէս նկատում է Յ. Քաջազնունին իր յայտադրի մէջ, — հարկա-

*) Օգոստոս. 21-ի օրէնքով Խորհուրդը իր ձեռքն էր առնում Բոլիւրայի դէմ կըռիւն գործը, յայտարարելով այդ օրէնքի երրորդ յօդւածով, որ «Հայաստանի Խորհրդի Բժշկա-սանիտարական մասնաժողովը վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքաւող բոլոր հիմնարկութիւնների վրա հսկող ամենաբարձր մարմինն է»:

դըրևած էինք սկսել սկզբից»։ Եւ Հայաստանի Խորհուրդը, իր վրա վերցնելով «անձեւ քաօսի եւ աւերակների կոյտից» պետութիւն ըստեղծելու դժարին դործը, ստիպւած եղաւ մէկ կողմից ծաւալել օրէնսդրական ամենալայն գործունէութիւն, իսկ միւս կողմից՝ անտեսելով իշխանութեան բաժանման սկզբունքը, զուտ վարչական հրահանգներ ու որոշումներ հրատարակել օրէնսդրութեան անւան տակ։ Այս շրջանում հրատարակւած օրէնքների վրա մի թուոյիկ հայեացք բաւական է տեսնելու համար, որ նրանց երկու-երրորդը աւելի շուտ վարչական կարգադրութիւններ են, քան օրէնքներ այս բառի իսկական իմաստով։

Այսպիսով Հայաստանի Խորհուրդը իսկապէս եղաւ այն, ինչ որ յայտարարեց իր բացման ճառի մէջ Ա. Սահակեանը։ «Գերագոյն Հայոց Ազգային Խորհրդի կողմից, — ասւած է այդ ճառի մէջ, — ես պատիւ ունիմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի եւ յայտարարել, որ այսուհետեւ սա է միակ լիազօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան»։

Դժուար չէ կռահել, որ Խորհրդի իշխանութեան այս ուռճացումը տեղի ունեցաւ ի հաշիւ կառավարութեան իրաւասութիւնների։

Հայաստանի անդրանիկ դահլիճը եղաւ շատ թոյլ իր անձնական կազմով։ Յ. Քաջազնունին եւ նրա յետեւը կանգնած Դաշնակցութիւնը, ղեկավարելով երկրի մասնաշատուկ պայմաններից բխող նկատումներով, որոշեցին կառավարութեան անդամների թիւը հասցնել նազազոյնի, միացնելով մի շարք վարչութիւններ մէկ նախարարութեան մէջ։ Այսպիսով կազմւեց միայն հինգ մինիստրութիւն՝ ֆինանսների, զինուորական, արդարադատութեան*) եւ ներքին ու արտաքին գործերի։ Այս թւից դուրս պէտք է ձգել արտաքին գործերի նախարար Ա. Խատիսեանին, որ գտնուում էր Պոլսում եւ ի վիճակի չէր որեւէ նպաստ բերելու Յ. Քաջազնունու դահլիճին։ Հաշիւից պէտք է հանել նաեւ երկու անկուսակցական նախարարներ։

*) Խ. Կարմիրեանի հետ ունեցած իմ մի մասնաւոր խօսակցութեան ժամանակ պարզեց, որ որոշւած էր նաեւ դատական գործերը միացնել նախարարութիւններից մէկին եւ կառավարութեան անդամների քիւր կրճատել եւս մէկ հոգով։ Ես առարկեցի այդ ծրագրի դէմ, պատճառաբանելով, որ քէ դատական գործերի բնոյքը եւ քէ այն հանգամանքը, որ արդարադատութեան նախարարը հանդիսանում է նաեւ ընդհանուր դատախազ (գեներալ պրովուրոր) պահանջում են, որ հիմնի դատական առանձին նախարարութիւն։ Խ. Կարմիրեան համաձայնեց իմ պատճառաբանութիւնների հետ եւ այդ հարցը դրական լուծում ստացաւ։

րին (զինւորական՝ Յ. Հախվերդեան եւ արդարադատութեան՝ Գ. Պետրոսեան), որոնք ոչ միայն զանգւածներ չունէին իրենց յետեւում, այլ անձնապէս էլ քաղաքական որեւէ արժէք չէին ներկայացընում: Մնում էին մէջ տեղը երեք հոգի՝ Յ. Քաջազնունին, Խ. Կարճիկեանը եւ Արամ Մանուկեանը: Արդ, ինչպիսի բացառիկ յատկութիւններն տէր էլ որ լինէին այս գործիչները, նրանք երեքով ի վիճակի չէին ապահովելու դաշլիճի համար այն հեղինակութիւնը, որ անհրաժեշտ է խորհրդարանային կարգերում գործող մի կառավարութեան համար:

Եւ, իրօք, Յ. Քաջազնունու առաջին դաշլիճը եղաւ ոչ թէ մի իսկական կառավարութիւն, այլ աւելի շուտ մի գործադիր կոմիտէ «պետական իշխանութիւնը ամփափող» «միակ լիազօր մարմին»՝ Հայաստանի Խորհրդին կից: Ուշադրաւ է, որ նաեւ Ժողովրդի աչքին առաջին զիրքերում կանգնեց «Պարսն Պարլամենտը» եւ միայն նրանից յետոյ ու, արդէն եւկրորդ գծի վրա, նա տեսաւ կառավարութիւնը: Այս ամենը տեղի ունեցաւ, անշուշտ, առանց որեւէ պայքարի, քանի որ «իրաւադուրկ կողմը» երբեք չառարկեց այս վիճակի դէմ: «Մենք որ կանք պարլամենտի ծառաներն ենք» — ասում էր խորհրդարանային Յանձնաժողովի նիստում Ֆինանսների նորընտիր նախարար Ա. Էնֆիաջեանը եւ որքան էլ նրա այս խօսքերը համարւեն արդիւնք «մոքալաքութիւնից»*) նախարարութեան բարձրացած մարդու բնական շփոթւածութեան, ընդհանուր առմամբ, նրանք ճիշտ էին բնորոշում այն փոխյարաբերութիւնը, որ ստեղծւել էր Հայաստանի Խորհրդի ու կառավարութեան մէջ:

Ընդգիծադիր կուսակցութիւնները, բնականաբար, զոհ մնացին իրերի այս վիճակից: Դուրս մնալով կառավարութիւնից ու մասնակցելով ամենալայն լիազօրութիւններով օժտւած Հայաստանի Խորհրդի աշխատանքներին, նրանք հնարաւորութիւն էին ստանում բաւականին նշանակալից դեր խաղալու պետական կեանքի հետ կապւած ամենակարեւոր խնդիրների լուծման մէջ ու արժեցնելու այսպիսով իրենց պատգամաւորական իրաւասութիւնները:

Իսկ Դաշնակցութիւնը: Ի՞նչ էր նրա վերաբերմունքը վերը մասնանշած երեւոյթի հանդէպ: Ներգործօրէն դրական: Եւ այլ կերպ էլ չէր կարող լինել: Որովհետեւ եթէ անդամ ընդունենք, որ փոքրաթիւ դաշլիճի անհրաժեշտութիւնը բխում էր Հայաստանի այն ժամանակւայ պայմաններից, այնուամենայնիւ անբացատրելի է մընում, թէ ինչո՞ւ բոլոր աթոռներն էլ նրա մէջ չգրաւեցին դաշնակ-

*) Թիֆլիզցի քաղքենի, վաճառական:

կառավարութիւնը կազմւեց միայն դաշնակցականներից ու քաղաքականապէս ոչ մի արժէք չներկայացնող անկուսակցականներից, (դատական եւ ղինւորական նախարարներ), պետական ղերադոյն իշխանութիւնը մարմնացնող ու ամբողջական պատասխանատուութիւնը կրող յայտարարւեց Հայաստանի Խորհուրդը, այսինքն՝ այն մարմինը, որ կազմւած էր կոալիցիոն հիմունքներով եւ որի մէջ մասնակցում էին հայ կեանքում գործող բոլոր կուսակցութիւնները: Բարձրագոյն մարմինների մէջ իրաւասութիւնների այս իւրաքանչիւր բաշխումը այսպիսով մի միջոց դարձաւ իրադրծելու, թէեւ մի քիչ ուրիշ ձևի տակ, այն կոալիցիան, որին այդ շրջանում ջերմօրէն ձգտում էր Դաշնակցութիւնը:

Այս պարագան մեծապէս ազդեց հայ կուսակցութիւնների ու մասնաւորապէս ընդդիմադիր կուսակցութիւնների գործելակերպի վրա: Այն չափաւորութիւնը, որ նրանք յայտնաբերեցին իրենց գործունէութեան ընթացքում եւ որի մասին խօսք եղաւ նախորդ յօդւածիս մէջ, բացատրւում է նաեւ նրանով, որ, գործելով իւրաքանչիւր իրաւասութիւններով օժտւած Հայաստանի Խորհրդի մէջ, նրանք առիթն ունեցան ընդհուպ մօտենալու պետական գործերին, մօտիկից ծանօթանալու ստեղծւած կացութեան ու տեսնելու այն դժւարութիւնները, որոնք ծառացել էին վարչական մարմինների առաջ: Հանդուրժող, զիջող ու չափաւոր եղաւ այդ շրջանում նաեւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ ամէն գնով աշխատեց պահել դոյութիւնը այն մարմնի, որ մի տեսակ որբան էր հանդիսանում քաղաքական ուժերի համագործակցութեան ու «աղգային միութեան»:

Հայաստանի Խորհրդի ամբողջ գործունէութիւնը յիշեալ շրջանում իր վրա կրեց վերը մատնանշած մտայնութեան կնիքը: Առնենք, օրինակի համար, Խորհրդի նախագահութեան եւ յանձնաժողովների կազմութեան հարցերը: Անգամ բնականոն պայմանների մէջ գտնուող երկրներում այդ հարցերի լուծումը, շատ յաճախ, տեղի է տալիս վէճերի ու բախումների ու հազւագիւտ դէպքերում է կատարւում խորհրդարանային բոլոր խմբակների փոխադարձ համաձայնութեամբ ու միաձայնութեամբ: Մենք որ ապրում էինք անասելի պայմաններում, որով եւ շատ աւելի առիթ ունէինք ջղայնոտ ու կուսազան լինելու, վերոյիշեալ հարցերը լուծեցինք համերաշխութեամբ ու մի քանի վայրկեանում: Խորհրդի նախագահութիւնը կազմուեց լայն կոալիցիայի հիման վրա եւ ոչ ոք նրա անդամներից համուակ չէր չստացաւ: Ձախ խմբակներից սոցիալիստ - յեղափոխականները, համաձայնելով մտնել նախագահութեան մէջ ու ստանձնել փոխ-նախագահի պաշտօնը, թեր քէարկեցին թէ Դաշնակցու-

Թեան եւ թէ ժողովրդականների ներկայացրած թեկնածուներին (նախագահ եւ փոխ-նախագահ)։ Նախագահութեան բոլոր անդամները թեր քէ ստացան նաեւ դաշնակցականների, ժողովրդականների, Թրքական Փրակցիաների ու անկուսակցականների կողմից։ Միայն սոցիալ - դեմոկրատները ձեռնպահ մնացին, երբ քէարկութեան էր դրած դաշնակցական Ա. Սահակեանի (նախագահ) եւ ժողովրդական Գր. Տէր-Խաչատրեանի (փոխ-նախագահ) թեկնածութիւնը, բայց թեր քէ տւին փոխ-նախագահութեան համար ներկայացրած մեր թեկնածուին (Դ. Զուբեան)։ Անշուշտ, նրանց կատարածը անկորեկտութիւն էր, որովհետեւ նաեւ նրանց յատկացւեց մի տեղ Խորհրդի նախագահութեան մէջ, աւագ քարտուղարի պաշտօնը տրամադրելով Պետ. Զարբեանին, որ թէեւ չէր մտնում սոց.-դեմոկրատ Փրակցիայի մէջ, բայց մարքսիստական հակումներ ունենալով, սերտ կապ էր պահում հայ էսդեկների հետ ու համարում էր նրանց անսպաշտօն թեկնածուն աւագ քարտուղարութեան համար։

Նոյն կողմիցիոն հիմունքներով ու համերաշխ միջնորդութիւն մէջ կազմակցան եւ խորհրդարանային յանձնաժողովները, որոնց բոլորի մէջ, - հաշւելով նաեւ զինուորականը, - տեղ ստացան միւս Փրակցիաների ներկայացուցիչների կարգին նաեւ սոց.-յեղափոխականներն ու սոց.-դեմոկրատները։

Գերագնահատել այս փաստերի նշանակութիւնը պէտք է, բայց պէտք է նաեւ թերադնահատել։ Եւրոպական որեւէ երկրում նման երեսօթիների մենք այսօր չենք հանդիպում։ Համարեա թէ ամէն տեղ էլ, խորհրդարանի մէջ, աջ ու ձախ նստարանների վրա բազմած կան խմբակներ, որոնք մերժում են նոյնիսկ ամենասովորական հարցերի շուրջը համերաշխել կամ ձեւական համաձայնութիւններ կնքել միւս Փրակցիաների հետ։ Իսկ մեր դադութահայ «պարլամենտները»... Ո՞ր մէկը դրանից կարողացել է դործադրել, թէկուզ վերը մատնանշած չափով, այն համադործակցութիւնն ու համերաշխութիւնը, որի մասին ամենքն են խօսում, բայց որը շարունակում է մնալ անհասանելի իդէալ մեր դադութների կեանքում։

Թողնենք Եւրոպան ու հայ դադութները եւ վերադառնանք կրկին Հայաստանի Հանրապետութեան, առնելով, սակայն, նրա կեանքի երկրորդ շրջանը, երբ Հայաստանի Խորհրդին փոխարինեց Պարլամենտը, արդէն որպէս Բարձրագոյն Օրէնդրական Մարմին։

Այդ պարլամենտում, ինչպէս յայտնի է, դաշնակցական պատգամաւորներից զատ, կար նաեւ սոց.-յեղափոխականների մի խումբակ՝ ընտրւած ժողովրդի քէներով՝ որը եւ կազմում էր Խորհրդարանի միակ օպոզիցիան։ Ի՞նչ եղաւ Դաշնակցութեան վերաբերմուն-

քը այդ խմբակի հանդէսը պարլամենտի նախագահութիւն ընտրելու եւ յանձնաժողովներ կազմելու հարցում: Շատ որոշ ու շատ կըտրուէ: Առանց խօսք անգամ անելու այդ մասին, մեզ պարզապէս դուրս նետեցին նախագահութեան կազմից, եւ, որ է՛լ աւելի զարմանալի է, նաեւ խորհրդարանային յանձնաժողովներից: Ժամանակները փոխուել էին, ներքին ու արտաքին դժուարութիւնները մեղմացել, եւ կոալիցիան ու համադրծակցութիւնը, անգամ խորհրդարանային գործունէութեան ասպարէզում, այլեւս աւելորդ էին ու անիմաստ:*)

Իրաւասութիւնների այս իւրաքանչիւր բաշխումը Հայաստանի խորհրդի ու կառավարութեան մէջ, իր կնիքը դրեց նաեւ այդ երկու մարմինների փոխյարաբերութիւնների վրա: Յ. Քաջաղնունու գահիւնը Հայաստանի խորհրդին ներկայացաւ աւելի շուտ որպէս մի գործադիր մարմին կամ տեղական ինքնավարութեան մի վարչութիւն, քան անկախ երկրի կառավարութիւն: Վարչապետի կողմից կարգացւած յայտագիրը մի խեղճ փաստաթուղթ էր, որի մէջ չկար եւ ոչ մէկ սկզբունքային կէտ, որ խօսէր կառավարութեան ընդհանուր քաղաքականութեան, նրա որդեգրած վարչական սխտեմի եւ առհասարակ նրա աշխարհայեացքի ու բնոյթի մասին: Այդ դեկլարացիայից շատ աւելի բովանդակայից էր այն կարճ ճառը, որ Յ. Քաջաղնունին արտասանեց մեր Նրեւանու հասնելու օրը, ի պատի Աղգային խորհրդի կաղմակերպւած ընթրիքի ժամանակ, երբ նա յայտարարեց, թէ նորաստեղծ պետութիւնը կողում է ոչ թէ հայկական, այլ Հայաստանի Հանրապետութիւն եւ քանի դեռ կառավարութեան գլխին կանգնած է ինքը, այդ Հանրապետութիւնը դառնալու է հայրենիք նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդներու համար:

Վարչապետը, խորհրդին ներկայանալիս, ոչ միայն այս կարգի յայտարարութիւններ չարաւ, այլ նոյնիսկ աւելորդ համարեց կրկնել վերոյիշեալը իր յայտագրի մէջ, մոռնալով, որ իր ճառը արտասանւած է եղել, յամենայն դէպս, անպաշտօն հաւաքոյթի ժամանակ:

Ընդդիմադիր խմբակցութիւնների քննադատութիւնները սահմանափակեցին մեծ մասամբ կառավարութեան յայտագրի այս կարգի բացերը մատնանշելով: Դաշնակցութեան ներկայացուցիչ Ս. Խաչատրեանի ի պաշտօնէ արտասանած մի երկու խօսքից յետոյ, որով

*) Վրաստանի սահմանադիր ժողովում, որտեղ կառավարութեան եւ ընդդիմադիր պատգամաւորների բաւական փոխյարաբերութիւնը մօտաւորապէս նոյնն էր, ինչ որ Հայաստանի Պարլամենտում, ընդդիմադիրները տեղ ստացան քէ նախագահութեան եւ քէ յանձնաժողովների մէջ:

նա հաւանութիւն էր տալիս կառավարութեան յայտադրին, ձայն առնէ եւ, որպէս սոց.-յեղափոխականների Փրակցիայի նախագահ, ու ցոյց տւի միառմի այն թերութիւնները, որ մեր խմբակի կարծիքով պարունակում է այդ յայտադիրը: Կառավարութիւնը, ասացի եւ, հէնց վարչապետի խոստովանութեամբ, չունի ոչ մի յենարան անցեալում ու չի յաջորդում նախկին կառավարութեան, բացի այդ՝ նա կոչւած է դործելու մի քարուքանդ եղած երկրում («անձեւ քաս» եւ «աւերակների կոյտ»), որտեղ «ամէն բան պէտք է սկսել սկզբից»: Նման պարագաներում կառավարութեան յայտադիրը անխուսափելի կերպով պիտի կրի սահմանադրական բնոյթ եւ պէտք է պարունակէ նաեւ մատնանշումներ այն սկզբունքների մասին, որոնց վրա կառուցւելու են նոր պետութեան հիմքերը: Ծիշտ է, հայ քաղաքական կեանքի ընթացքն ու բովանդակութիւնը կախւած է Հայաստանի խորհրդից, բայց դահլիճի վրա պարտականութիւն է ընկնում պարզելու այն կառավարական սխտեմը, որին նա հետեւելու է իր դործունէութեան ընթացքում: Յայտադրի մէջ այդ մասին ոչ մի խօսք չկայ: Կառավարութեան ծրագիրն ու դիտաւորութիւնները ծածկւած են ընդհանուր արտայայտութիւններով, որոնք զրկում են մեզ հնարաւորութիւնից որոշ կարծիք կազմելու Հայաստանի խորհրդին ներկայացող դահլիճի ու նրա հետապնդելիք քաղաքականութեան մասին: Այս բոլորի հիման վրա, սոց.-յեղափոխականների Փրակցիան ձեռնպահ է մնալու վստահութիւն կամ անվստահութիւն քէ տալուց Յ. Քաջաղնունու կառավարութեան եւ իր վերաբերմունքը նրա հանդէպ կը պարզէ ըստ այն դործունէութեան, որ նա ցոյց կտայ հետագայում:

Այս եղրակացութեան էութիւնն ըմբռնելու համար կարծում եմ մեկնաբանութիւնների պէտք չկայ: Մեր Փրակցիան անվերապահ աջակցութիւն էր խոստանում կառավարութեան, բայց եւ չէր հետապնդում նրա տապալումը: Յամենայն դէպս, դաշնակցականների, Ժողովրդականների ու թիւրքերի տրամադրութիւններին ծանօթ լինելով, նա շատ լաւ դիտակցում էր, որ ձեռնպահ մնալով ապահովում է դաւիթի համար անհրաժեշտ մեծամասնութիւնը:

Չափաւոր վերաբերմունք ցոյց տւաւ Յ. Քաջաղնունու յայտադրին ու նրա կառավարութեան նաեւ սոց.-դեմ. Փրակցիան: Անելով մի շարք դիտողութիւններ, որոնցից մի երկուսը զերծ չէին անցողի արտայայտութիւններից («կառավարութեան յայտադիրը յիշեցնում է Ստոյիպինին, որ ասում էր՝ «նախ խաղաղութիւն, ապա բեֆօրմներ») եւ առաջ քաշելով մշտական զօրքը Ժողովրդական միւլիցիայով փոխարինելու անդործնական ու մի քիչ անտեղի ծրա-

զերբ, այդ Փրակցիայի նախագահը խորհրդի քննարկութեան դրահետեւեալ բանաձեւը. «Լսելով կառավարութեան յայտարարութիւնը, աչքի առջ ունենալով երկրի ներկայ ծանր պայմանները եւ ցանկութիւն ունենալով, որ կառավարութիւնը իր առաջիկայ դործունէութեան ժամանակ՝ յենած դեմոկրատական կազմակերպութիւնների վրա՝ ղեկավարելի Փրակցիաների արած ցուցմունքներով (ասել է թէ բոլոր Փրակցիաների. ինչպիսի՞ սրտառուչ ցանկութիւն «ազգային միութիւն» հաստատելու՝ Ա. խ.) տանելու երկիրը դէպի դեմոկրատական կարգերը — յօգուտ աշխատաւոր դասակարգերի, Հայաստանի խորհուրդը անցնում է հերթական խնդիրներին»: Այս բանաձեւի ճիշտ զնահատութիւնը տալու համար, յիշենք այստեղ, որ նրան դէմ քիչ ոչ ոք չուաւ, ոչ իսկ կառավարական կուսակցութեան պատկանող դաշնակցական պատգամաւորները: Սրանք, ինչպէս եւ միւս Փրակցիաները, որոնց թւում նաեւ սոց. — յեղափոխականների խմբակը միայն ձեռնպահ մնացին: Եթէ դաշնակցականների ձեռնպահութիւնը վկայում էր այս բանաձեւի չափաւորութեան մասին, մեր ձեռնպահութիւնը իր հերթին ցոյց էր տալիս, որ իսկապէս որեւէ բլոք կամ համաձայնութիւն գոյութիւն չունէր մեր ու սոց. — դեմոկրատական Փրակցիայի միջեւ:

Ինչ վերաբերում է ժողովրդականներին, նրանք իրենց գրաւոր պատասխանը սկսում էին «գոհունակութիւն յայտնելով կառավարութեան», որ «որոշել է հետեւել ոչալ քաղաքականութեան եւ խուսափել է ծրագրային ծայրայեղ արտայայտութիւններից»: Այս շարունակութեան մէջ անում էին մի շարք դիտողութիւններ, որոնք ոչ այնքան առարկութիւններ էին յայտագրի մէջ յիշատակած ծրագրի դէմ, որքան մատնանշումներ կառավարութեան կողմից լրութեան մատնած հարցերի մասին: Վերջում ժողովրդականները խոստանում էին աջակցել կառավարութեան «այն չափով միայն, որչափ նա կիրառործէ իր ղեկարացիայի այն խոստումները, որոնց դէմ Փրակցիան առարկութիւն չունի եւ որչափ նա ի նկատի կառնէ եւ կաշիատի իրագործել Փրակցիայի դիտողութիւնները»:

Ինչպէս յայտնի է Յ. Քաջազնունին առարկեց ժողովրդականների այս պայմանի դէմ եւ պահանջեց որ վստահութեան բանաձեւի միջից հանւի այն: Ժողովրդականները համաձայնեցին (չորսը թեր, երկուսը դէմ), որից յետոյ քննարկութեան դրեց նրանց ու դաշնակցականների առաջարկած հետեւեալ բանաձեւը. «Հայաստանի խորհուրդը լսելով կառավարութեան յայտարարութիւնը եւ մինչիստը — նախագահի բացատրութիւնները այդ յայտարարութեան առիտով եղած դիտողութիւնների մասին, հաւանութիւն է տալիս նրանց

(բացատրութիւններին) և անցնում է հերթական խնդիրներին» :

Այս բանաձևը անցաւ 23 ձայնով (15 դաշնակց. , 4 ժողովրդ. , 3 թուրքեր և մէկ ուսւ) : Դէմ ոչ ոք չքւէարկեց : Ձեռնպահ մնացին 11 հոգի , որոնց մէջ մեր և սոց. — դեմ . Փրակցիակաների այդ օրւայ նիստին ներկայ եղող բոլոր անդամները :

Ահաւասիկ կառավարութեան և խորհրդի առաջին հանդիպման արդիւնքները : Ինչի՞ մասին են վկայում նրանք : Նախեւառաջ քաղաքական հաստեղծութեան մասին այն կուսակցութիւնների , որոնցից կազմւած էր այդ ժամանակւայ օպոզիցիան : Տեսնելով դահլիճի թերութիւնները ու դժգոհ մնալով նրա ներկայացրած յայտադրից , ընդդիմադիր խմբակները այնուամենայնիւ ունեցան բաւականաչափ քաղաքական իմաստութիւն հասկանալու համար , որ չի կարելի առաջին իսկ օրից տարւել պարլամենտական խաղով ու կառավարական ճշմարտամ առաջ բերել : Յ. Քաջաղնունու դահլիճի տապալումը , վերը մատնանշած պատճառներով , թերեւս այնքան էլ մեծ չարիք չէր , բայց դժւար էր կռահել , որ նա անդրադառնալու էր նաեւ խորհրդի վրա , խանդարելով այն դոյաւիճակը , որ նախապայման էր այդ Բարձրագոյն Մարմնի արդիւնաւէտ դործունէութեան : Ապահովելով իր ձեռնպահութեամբ անհրաժեշտ մեծամասնութիւնը կառավարութեան համար , օպոզիցիան չուզեց զնալ չըմրտաձւած ճանապարհով և հնարաւորութիւն տաւ Հայաստանի խորհրդին արագ կերպով փակելու դահլիճի հարցը ու «անցնելու իր հերթական խնդիրներին» :

Ո՞րոնք էին այդ խնդիրները , ես այստեղ չպիտի թւեմ : Վերը արդէն ասեցի , որ Հայաստանի խորհուրդը չէր սահմանափակուում իրայն օրէնսդրական դործունէութեամբ , այլ զբաղւում էր պետական կեանքի համարեա թէ բոլոր հարցերի քննութեամբ ու տնօրէնութեամբ : Դա իր յատուկ դրոշմն էր դնում նրա աշխատանքների վրա : Օրինագծերի քննութիւնից ու քւէարկութիւնից զատ , խորհուրդի նիստերը ներդրում էին շատ յաճախ կառավարութեան ղեկոյցներին ու բացատրութիւններին , որոնք տրւում էին պատգամաւորներէ կողմից ներկայացւած հարցումներին ու հարցապնդումներին ի պատասխան : Այդ նիստերում տեղի ունեցող վիճաբանութիւնները երբեմն ընդունում էին շատ բուռն բնոյթ , բայց բնորոշ է , որ նրանք երբեք չվերածւեցին այնպիսի սկանդալներէ , որոնցով բաւակաւին հարուստ են եւրոպական պարլամենտների տարեգրութիւնները : Յիշատակածս ամբողջ շրջանում Հայաստանի խորհրդի մէջ չպատահեց կարգի խանգարման այնպիսի մի դէպք , որ ստիպէր նրա նա-

խաղաչին փակել նիստը եւ կամ պատժական միջոցներ ձեռք առնել այս կամ այն պատգամաւորի հանդէպ:

Ինչ վերաբերում է այդ աշխատանքների ներքին բովանդակութեան, այդ մասին մենք ունենք երկու վերին աստիճանի բնորոշ վկայաթղթեր. 1) Հայաստանի Խորհրդի ամենաձախաղոյն անդամի պաշտօնական մէկ յայտարարութիւնը եւ 2) Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական օրգանի յօդւածը:

Խորհրդի օգոստոսի 27-ի նիստում, որտեղ քննուած էր քաղաքացիական ազդարձակութիւնը ղինաթափ անելու օրինագիծը, ներքին գործոց նախարարը, ջղայնացած տեղի ունեցած քննադատութիւններից, յայտարարում է, որ աւելորդ են վիճաբանութիւնները, «քանի որ սոցիալ - դեմոկրատական ֆրակցիան մի անգամ ընդ միշտ խաչ է դրել այս կառավարութեան վրա, որ նա գտնում է այս կառավարութիւնը անընդունակ ու անգործունեայ»: Դրան ֆրակցիայի անունից պատասխանում է բոլշեւիկ Ա. Մելիքեանը,^{*)} յայտարարելով հետեւեալը. «ներքին գործոց միւնիստրի այն դիտողութիւնը, թէ սոցիալ - դեմոկրատները խաչ են դրել այս կառավարութեան վրա չէ համապատասխանում իրականութեան: Մենք այն կարծիքին ենք, որ այսպիսի քաղաքական անկայուն կացութեան մէջ պէտք է աջակցել կառավարութեանը»: Եւ իր ասածներին որպէս ապացոյց, նա յայտնում է, «որ օրինագիծը անցնելուց յետոյ, նրա իրականացման ժամանակ, իրենց կուսակցութիւնը խոչընդոտ չի հանդիսանայ»: Առաջարկելով ընթերցողներին համեմատել բոլշեւիկ Ա. Մելիքեանի այս յայտարարութիւնը Ա. Խանջեանի ու նրա ընկերների կողմից մեր օրերում արտասանող ճառերի հետ, անցնենք միւս վկայութեան: «Հորիզոն»-ի օգոստ. 16-ի թւում կարդում ենք Հայաստանի Խորհրդի գործունէութեան մասին Երեւանից ուղարկւած հետեւեալ թղթակցութիւնը. «Տրամադրութիւնը միտինգային չէ: Գործի, աշխատանքի գիտակցութեամբ համակւած անդուռ ու անադմուկ օրգանական աշխատանք է կատարում: Նկատելի է, որ բոլորն էլ անխտիր, առանց կուսակցութիւնների տարբերու-

*) Հայաստանի Խորհրդի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան բաղկացած էր հինգ մեմբերիկներից և մէկ բոլշեւիկից: 1918 թ. նոյեմբերի վերջերին բոլշեւիկները պահանջեցին, որ իրենց առանձին տեղ յատկացւի, քանի որ նրանք կազմակերպւորէին վերջնականապէս բաժանել են մեմբերիկներից: Խորհուրդը չկարողացաւ բաւարարել նրանց պահանջը, որովհետեւ իր մեմբերին կանոնադրութեան մէջ այդ նախատեսւած չէր: Այդ մերժումից յետոյ բոլշեւիկ պատգամաւոր Ա. Մելիքեանը դուրս եկաւ Խորհրդի կազմից, եւ նրա տեղը գրաւեց մէկ ուրիշ մեմբերիկ:

քեան, զգում եմ իրենց՝ մեծ պատասխանատուութեան հանդէպ: Ներառմբ ոչ միայն չեմ ուզում խուսափել պատասխանատուութիւնից, ոչ միայն արգելիքներ չեմ յարուցանում կառավարութեան առջեւ, այլեւ աշխատում եմ լծել աշխատանքի եւ դուրս բերել երկիրը այս ծանրը նգնաժամից» («Հորիզոն», Թ. 161):

Մենք մի քիչ յետոյ կը տեսնենք, որ հետագայում այդ նոյն «Հորիզոն»-ը Հայաստանի Խորհրդի հէնց այս շրջանի գործունէութեան ու մասնաւորապէս՝ ձախակողմեան ֆրակցիաների գործելակերպի մասին, բառի տեղ հակառակ բառը դնելով, սկսեց յայտնել կարծիքներ, որոնք բոլորովին տարբերում էին վերը մէջ բերածից: Թողնելով այդ հոգեփոխութեան բացատրութիւնը յաջորդ էջերին, այստեղ ես անհրաժեշտ եմ համարում մատնանշել, որ դաշնակցական թղթակցի կարծիքները՝ յայտնած թարմ տպաւորութիւնների տակ՝ միանգամայն համապատասխանում էին ճշմարտութեան: Այդ շրջանում դաշնակցականները համարեա թէ միեւնոյն ակնոցներով էին նայում հայ իրականութեան, ինչ որ մենք: Բուլեւիկեան «Խորհրդային Հայաստանը» անցեալ տարի մի քանի քաղաածներ էր հրատարակել Երեւանում 1918-1919 թւականներում հրատարակող «Զանգ» թերթից, որտեղ ամենադարհուրեկի դոյներով են նկարագրւած Հայաստանում տիրող վիճակն ու կարգուկանոնը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Թէ որ իրենք դաշնակցականները ղժգոհ են եղել այդ դրութիւնից եւ քննադատական վերաբերմունք են ունեցել Յ. Քաջազնունու կառավարութեան հանդէպ, երեւում է նաեւ այն հաշւետւութիւնից, որ տպագրել է «Հորիզոն»-ը 1918 թ. օգոստոսի վերջերին կայացած Հ. Յ. Դ. Հայաստանի Ռայոնական Ժողովի աշխատանքների մասին: Ժողովի Զ. Նիստում, երբ քննրւում էր «վերաբերմունք դէպի կառավարութիւն» հարցը, տեղի են ունենում բուռն քննադատութիւններ դահլիճի հասցէին: «Խօսողները գտնում են, - գրում է «Հորիզոն»-ը, - որ գործերը դանդաղ են ընթանում, Ժողովուրդը դրական աշխատանք չի տեսնում: Գաղթականական գործերը անուշադրութեան են մատնւած և վարիչը այս ճգնաժամային ըրպէին արձակուրդ է ստացել: Վատ դրութեան մէջ է եւ Ժողովուրդի պարենաւորումը»:

Քննադատական այս ճառերը, որ ոչնչով չեն տարբերւում օպոզիցիայի ելոյթներից, վերջանում են այնպէս, ինչպէս վերջացան Խորհրդում կառավարութեան յայտագրի շուրջը տեղի ունեցած վիճաբանութիւնները, այսինքն - վստահութեան քէով Յ. Քաջազնունու դահլիճին:

Հայ պետական կեանքում ստեղծւած վերոյիշեալ գոյավիճակը, արդիւնք էր, ինչպէս ասացի, այն հանգամանքի, որ տւեալ շրջանում մեր քաղաքական կուսակցութիւնները եւ նրանց թւում մանաւանդ Հ. Յ. Դաշնակցութեան գործելակերպի վրա մշտապէս ազդեց մեր ժողովրդին սպառնացող արտաքին վտանգի ու նորակազմ Հանրապետութեան առաջ բացւող մռայլ հեռանկարների գիտակցութիւնը: 1918 թ. հոկտեմբերին, արտաքին աշխարհում տեղի ունեցան առաջնակարգ կարեւորութիւն ունեցող իրադարձութիւններ, որոնք հիմնովին փոխեցին մեր քաղաքական գործիչների ինքնազգացումն ու մտայնութիւնը ու ծնեցրին նրանց մէջ նախկինին հակոտնեայ տեսակէտներ հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետութեան ապագայի մասին: Սակայն այս լաւատեսութիւնը միեւնոյն թափով չհամակեց մեր բոլոր կուսակցութիւններին, ինչպէս որ համակել էր յոռետեսութիւնը նախկին շրջանում: Հ. Յ. Դաշնակցութիւնը եղաւ շատ աւելի խանդավառ Հանրապետութեան առաջ բացւող հեռանկարների նկատմամբ, քան ընդդիմադիր կուսակցութիւնները եւ մանաւանդ ձախ օպոզիցիան: Հոգեվիճակի ու տեսակէտների այս տարբութիւնը հիմնիվեր փոխեց նախկին շրջանում ստեղծւած *Statu quo* ն եւ նոր հունի մէջ դրաւ հայ քաղաքական կեանքի հետագայ ընթացքը:

Հոկտեմբերի 5-ին Երեւան եկաւ Խալիլ փաշան: Եկաւ ոչ թէ բանակի գլուխ անցած, ինչպէս սպասում էինք մենք բոլորս գրեթէ ամէն օր, այլ որպէս հիւր իր «հին բարեկամ Արամին»՝ Հայաստանի ներքին գործոց նախարարին: Ողջագուրանքի մեղրածոր խօսքերից, որ նա արտասանեց իր բարեկամին հանդիպելիս, շատ աւելի քաղցրահնչիւն էին այն խոստումները, որ նա տւաւ հրաժեշտի ժամանակ: Խալիլ փաշան խոստացաւ պարպել թուրք զօրքերի կողմից պրաւած Լոռի-Փամբակի շրջանը: Փաստօրէն որեւէ շնորհ չկար այս խոստումի մէջ, քանի որ Հայաստանին վերադարձում էր մի հողամաս, որ նրան էր պատկանում նոյն իսկ Բաթումի դաշնագրով: Բայց չնայած դրան, հայ ղեկավար շրջաններն ու ժողովրդական զանգաւածները չէին կարող չփնտռել «խորհուրդ մեծ եւ սքանչելի» այն բանի մէջ, որ առաջին անգամը լինելով այս վերջին մէկ տարւայ ընթացքում, թրքական յարածիւն մակընթացութեան փոխարէն կատարւում էր հակառակ պրոցես՝ տեղատուութիւն:

Անցաւ եւս մի տասնեակ օր ու ամէն ինչ պարզեց մեզ համար: - Պատերազմը վերջանում էր եւ վերջանում էր Թիւրքիայի ու նրա գլխակիցների պարտութեամբ: Այդ նախեւառաջ նշանակում էր, որ վերացւում է այն դամոկլեան սուրը, որ կախւած էր Հայաստանի

Հանրապետութեան գլխին: Հոկտեմբերի վերջերին Հայ քաղաքական միտքը, իր զանազան ճիւղաւորումներով, արդէն ազատազրկած էր արտաքին վտանգի ճնշումից: Բայց այդ բոլորը չէր: Արտաքին ճակատում տեղի ունեցած փոփոխութիւնները բարեբար ազդեցութիւն էին անելու նաեւ մեր ներքին գործերի վրա: Պարենաւորման տալանալը մեղմելու էր եւ դրա հետեւանքով ցամքելու էր ալէն նաեւ այն աղբիւրի, որ սնունդ էր տալիս զանազան դժգոհութիւնների՝ քաղաքական հողի վրա:

Ստեղծւած այս նոր պայմանները, ինչպէս ասացի, հսկայական յեղաշրջում առաջ բերին մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան ինքնազդացման ու մտայնութեան մէջ: Նա ժամը հասած համարեց գործելու նոր մեթոտներով ու նոր նպատակների համար: Իրականութիւն էր դառնում այն, ինչի մասին երազել էին դաշնակցական գործիչներից շատերը: Յիշում եմ մի դէպք մօտիկ անցեալից: Մենք դեռ Թիֆլիզում էինք՝ Արամեանցի տանը: Նոր էին վերադարձել Աղգային Խորհրդի պատւիրակները Բաթումի դաշնագրի բեռը չալկած: Կքած այդ բեռի ծանրութեան տակ՝ մենք փսփսուկով խօսում էինք այն մասին, թէ ի՞նչ պէտք է անենք սրանից յետոյ: «Բայց մի՞թէ պարզ չէ, — միջամտեց Աղգ. Խորհրդի դաշնակցական անդամներից մէկը, — մենք առայժմ պէտք է տալիս անքնք, մինչեւ որ տեսնենք, թէ ինչ է լինելու: Բայց հէնց որ հասաւ մեր ժամը, վեր ենք կենալու ու քշշը՛կելու ենք դրանց (թիւրքերին) մինչեւ Դիարբէքիր»:

Եւ այժմ ահա վերջացել էր «տալի անելու» շրջանը ու հասել էր ժամը «դէպի Դիարբէքիր խոյանալու»: Երբ այս նոր տրամադրութեամբ համակւած՝ Դաշնակցութիւնը նայեց իր շուրջը, նա տեսաւ Հայ իրականութիւնը — ներկան ու մօտիկ անցեալը — բոլորովին նոր գոյնով: Եւ է՛ն առաջինը, որ նա նկատեց զարմանքով, այդ մենք էինք՝ Հայաստանի Խորհրդում նստած ընդդիմադիրները: Ո՞վքեր են այս մարդիկ եւ ինչո՞ւ համար են այստեղ բազմել, այն էլ դաշնակցականներին հաւասար թուով: Աւելի մեծ անհետեւութիւն, քան այդ չէր կարող լինել Հայ ղեկավար կուսակցութեան համար: Պէտք էր վերջ տալ այդ անհետեւութեան, պէտք էր շտկել այն սխալը, որ թոյլ էր տւել Դաշնակցութիւնը անցեալում՝ ձախորդ պայմանների ճնշման տակ: Այժմ, երբ այդ պայմանները փոխւել են, կատարւած գիշումներն էլ դառնում են աւելորդ ու անմիտ: Պէտք է վերանայել անցեալում կնքած համաձայնութիւնը, պէտք է ուժերի այնպիսի մի նոր դասաւորում կատարել, որ Դաշնակցութիւնը ստանայ գերակշիռ դեր հայ պետական կեանքում:

Այդ գերակշռութիւնը ձեռք բերելու միջոցներից մէկն այն էր, որ Դաշնակցութեան համար ապահովէր բացարձակ մեծամասնութիւն երկրի «միակ լիազօր մարմնի»՝ Հայաստանի Խորհրդի մէջ: Բայց այդ հնարաւոր էր միայն հիմնական օրէնքների փոփոխման գնով եւ կամ «պետական հարածի» միջոցով: Դաշնակցութիւնը, տեղը եկած ժամանակ կանգ չէր առնի ոչ մէկի եւ ոչ միւսի առաջ, բայց այդ վայրկեանին պայմանները դեռ նպաստաւոր չէին նման մի գործելակերպի համար: Թիւրքերը թէեւ թեքել էին իրենց երեսները դէպի Դիարբէքիր, բայց դեռ նստած էին Ուլուխանլուում:

Մնում էր երկրորդ ելքը: Վերադարձնել կառավարութեան այն բոլոր իրաւունքները, որոնք ըստ օրինի նրան էին պատկանում ու տրւել էին Հայաստանի Խորհրդին միայն որոշ նկատումներով: Ուժեղացնելով, այսպիսով, կառավարութիւնը ու դարձնելով այն երկրի բախտը վարող միակ լիազօր մարմին, պէտք էր այնուհետեւ փորձել վերակազմել այն այնպիսի մի ձեւով, որ ապահովւի Դաշնակցութեան գերակշռութիւնը: Եթէ այդ չի յաջողւի, եթէ միւս կուսակցութիւնները (կամ նրանցից մէկն ու մէկը) չեն համաձայնի այս նորաձեւ «կոալիցիային», ապա մնում էր վերջին ելքը՝ կազմել զուտ դաշնակցական միատարր կառավարութիւն:

Այսպիսով ուրազուեց մի նոր քաղաքականութիւն, որի էութիւնը եթէ բնորոշելու լինենք բոլշեւիկեան հայերէնով, կստացւի՝ «Երեսնեւս դէպի կառավարութիւն», ապա ուրեմն եւ մէջքներս դէպի Հայաստանի Խորհուրդ:

Այս «լոզունգին» յաջորդեց եւ «կամպանիան»: Դաշնակցական մամուլը սկսեց մի կատարեալ արշաւանք հայ օպոզիցիայի ու Հայաստանի Խորհրդի դէմ: Խմբագիր եւ աշխատակից, ջանալով մէկը միւսին գերազանցել սուր արտայայտութիւնների ու անհիմն մեղադրանքների մէջ, սկսեցին յայտարարել ընդդիմադիրների կազմակերպած բլօքի, միտինգային գործունէութեան եւ «կատաղի ու հրէշաւոր գործելակերպի» մասին: Ահաւասիկ մի քանի նմոյշներ այդ գրութիւններից: «Խօսքի հերոսները, — գրում էր «Հորիզոն»ը իր խմբագրականի մէջ, — խօսարան դարձրին — կատարուն (°), յանցապարտ եւ նեխող-երկրի գերագոյն օրէնագիր մարմինը եւ շարունակեցին մնալ դասալքող զինուորին յատուկ յոխորտացող քննադատողի դերում» («Հորիզոն», թ. 218, հոկտ. 25): Նոյն թերթում տպագրւած մի թղթակցութեան մէջ, որ ուղարկւած էր Երեւանից, կարդում ենք. «սոց.—դեմ», սոց.—յեղ., հայ ժողով. ու թիւրքական Ֆրակիայաները լռելեան կազմել էին մի սրբազան դաշնակցութիւն (ոչ աւելի եւ ոչ պակաս՝ Ա.Խ.), որի անմիջական

նպատակն էր տապալել կառավարութիւնը եւ վերջ տալ Դաշնակցութեան գերիշխանութեան»։ «Զուրկ պարլամենտական աշխատանք կատարելու կարողութիւնից, շարունակում է այդ թղթակիցը, չնրանք («Բլոքճիններս» Ա. խ.) Հայաստանի պարլամենտը վեր էին ածել միտինգի (կարգա նախկին թղթակցութիւնը, որտեղ առաւ է, թէ «տրամադրութիւնը միտինգային չէ» Ա. խ.), ուր ամէն նիստի խուժանավարական ճառեր էին արտասանում վերնախարկում հաւաքած ամբոխից ծափեր քաղելու համար» («Հորիզոն» թ. 231, 10 նոյեմբ.) :

Այսքանը բաւական չհամարելով, «Հորիզոն»ը մի քանի օր յետոյ, իր հարաւճները ուղղում է արդէն Հայաստանի խորհրդի դէմ, քննադատելով այն համաձայնութիւնը, որ ծնունդ տաւ այդ մարմնին։ «Հայաստանի Գերագոյն Օրէնսդէր Մարմնի ծնունդն ու կեանքը, գրում է Դաշնակց. Բիւրոյի օրգանը իր խմբագրականի մէջ, սկսեց եւ ընթանում է հակօրէն, անբնական եւ աղէտաբեր պայմաններում։ Աղճատւած ընտրական քէտով դեռ ամիսներ առաջ Ռուսաստանի հայութեան Համախորհրդին ընտրեց Ազգ. խորհուրդ, բաւականին երկար ժամանակ «ազգի ընտեալները» «կառավարեցին» (չակերտները խմբագրին են՝ Ա. խ.) մեր երկիրը, իսկ վերջն էլ, տեղափոխւելով Երեւան, խորհրդին մասնակցող կուսակցութիւնների «համերաշխ» որոշմամբ եռապատկեցին եւ հռչակեցին իրենց հայ ժողովրդի եւ Հայաստան երկրի գերագոյն օրէնսդէր մարմնի անդամներ» («Հորիզոն», թ. 4, 23 նոյեմբ.) :

Այս տողերի իմաստը պարզ է։ Դաշնակցութիւնը իր պաշտօնաթերթի բերնով յարուցանում էր Սահմանադրութեան վերաքննութեան ու պետական բարձրագոյն մարմինների վերակառուցման հարց։ Այդ «ռեֆորմների» ընթացքում պէտք է զոհէր այն մարմինը, որ ծնունդ էր առել «աղճատւած ընտրական քէտով», ընտրւած Ազգ. խորհրդից եւ որի մէջ տեղեր էին գրաւել էսէռների ու էսդեկների նման խմբակցութիւններ, որոնք «մեր իրականութեան մէջ հող չունեն եւ եկուր ուժեր են» («Հորիզոն» 10 նոյմբ. թ. 231)։ «Վեցական տեղեր գրաւեցին այն ժամանակ, դանդաղուում է «Հորիզոն»ը (թ. 4, 23 նոյեմբ.), երբ իրականութեան մէջ հինգական համախորհունէին միայն»։

Եւ այսպէս, կառավարութեան վերակազմութիւնը Դաշնակցութիւնը դարձնում է հերթական ու անյետաձգելի։ «Բնականոն» պաշտմաններում գլուխ բերելու համար այդ դործը անհրաժեշտ էր, սակայն, որ նրան նախորդէր դաշլիճի տաղնապ։ Պատմութեան մի զարմանալի քմայքով այդ տաղնապը տեղի ունեցաւ հէնց այն վայրկեանին, երբ Յ. Քաջազնունին արդէն համբերութիւնից դուրս էր ե-

կել եւ անկարող էր անգամ մէկ աւելորդ օր սպասել դրան: Լայն հասարակութեան անծանօթ են Յ. Քաջազնունու առաջին դահլիճի տապալման պատճառները, եւ ես ստիպւած եմ մի փոքրիկ փակագիծ բանալ այստեղ ու մէջ բերել այդ դէպքի մանրամասնութիւնները:

Հայաստանի առաջին կառավարութիւնը տաւ իր հրաժարականը նոյեմբերի սկզբին, որովհետեւ նախորդ ամսւայ վերջին նա մնացել էր փոքրամասնութեան մէջ Խորհրդի այն նիստում, որտեղ քննւել ու բեկանւել էր ներքին գործոց նախարարի արած մի կարգադրութիւնը Դահլիճանի զեմստվոյի (տեղական ինքնավարութեան) մասին:

Այդ զեմստվոն կազմւել էր դեռ Անդրկովկասեան իշխանութեան ժամանակ սոց. — յեղափոխական մի քանի գործիչներէ ջանքերով: Մեր այդ ընկերները, 1918ի փետրւարի խառն օրերին կարողացել էին գաւառի ալլատարը (հայ, թուրք, ռուս) ազգաբնակչութիւնը միացընել տեղական ինքնավարութեամբ կառավարելու գաղափարի շուրջը եւ, այսպիսով ստեղծել էին Դիլիջանի զեմստվոն ու նրա միջոցով էլ այդ վիճելի հողամասը հետագայում միացրել էին Հայաստանի Հանրապետութեան՝ խաղաղ ճանապարհով ու բոլոր տարրերի (մէջն առնելով նաեւ թուրքերին) միահամուռ համաձայնութեամբ: 1918ի աշնանը, երբ հիմք դրւեց պետական իշխանութեան, հնարաւոր չեղաւ զեմստվոններ կազմակերպել Հայաստանի միւս գաւառներում, որտեղ, դրա փոխարէն, կարգւեցին նշանակովի գաւառապետներ ու գաւառական վարչութիւններ: Այսպիսով ստեղծւեց մի «անբնական» կացութիւն, որի հետեւանքով Հայաստանի գաւառներից մէկի իշխանութիւնը մնաց էսէոնների ձեռքին, զգուհութեան մատնելով այնտեղի դաշնակցականներին: Այս վերջինները միշտ ցանկացան գրաւել զեմստվոն, եւ վստահ լինելով, որ ընտրութիւնների դէպքում, յաղթութիւնը տանելու են իրենք, պահանջեցին զեմստվոյի շուտափոյթ ընտրութիւններ, առանց սպասելու, որ լրանայ հին լիազօրութիւնների շրջանը: Ներքին գործոց նախարարը, ընդառաջ գնալով Դիլիջանի գաշնակցականների ցանկութեան, հրահանգ տաւ կատարել այդ նոր ընտրութիւնները: Նրա այդ կարգադրութիւնը հակաօրինական էր, քանի որ նախարարը կարող էր ժամանակից առաջ լուծել ընտրովի մի մարմին այն դէպքում միայն, եթէ այս վերջինը ապօրինի որեւէ քայլ էր կատարել: Նման մեղադրանք չէր յարուցուած Դիլիջանի մեր ընկերների դէմ, որոնք, ընդհակառակը, բարի յարաբերութիւնների մէջ էին ներքին գործոց նախարարութեան հետ:

Մեր Փրակցիան, բնական է, չէր կարող չհակադդել այս ապօրինի կարգադրութեան: Ստանալով մանրամասն տեղեկութիւններ կա-

տարւած կարգադրութեան ու նրա դրդապատճառների մասին, մենք ներկայացրինք մի հիմնաւորւած հարցապնդում Իերբին գործոց նախարին: Այս վերջինս տւաւ իր բացատրութիւնները, որոնք աւբաւարար նկատուեցին Հայաստանի Սորհրդի մեծամասնութեան կողմէ: Կառավարութիւնը, մեր Փրակցիայի առաջարկած բանաձեւի քէտարկութեան ժամանակ վստահութեան հարց չդրաւ, բայց երբ այդ բանաձեւը շահեց ձայների մեծամասնութիւն, Յ. Քաջաղնունին յայտնեց, որ կառավարութիւնը հրաժարուելու է, որովհետեւ մնացել է փոքրամասնութեան մէջ:

Ամենահետաքրքրականը սկսեց, սակայն, դրանից յետոյ: Ընկերներիս համաձայնութեամբ, միւս օրը ես տեսնուեցայ Փինանների նախարար Ս. Կարճիկեանի հետ՝ նպատակ ուննալով պարզելու մեր տեսակէտը տեղի ունեցած քէտարկութեան ու նրա հետեւանքով ըտտեղծւած նոր կացութեան մասին: Ես նրան յայտնեցի, որ մեր կարծիքով կառավարական տաղնապի մասին խօսք լինել չէ կարող: Նախ բանաձեւի քէտարկութիւնից առաջ Յ. Քաջաղնունին վստահութեան հարց չէ դրել, որով Սորհրդի քէտարկութեան նշանակութիւնը սահմանափակում է միայն նրա բացասական վերաբերմունքով Ներքին գործոց նախարարի վարչական մի կարգադրութեան հանդէպ: Դահլիճի ընդհանուր քաղաքականութիւնը չօշափող այսպիսի անկարեւոր հարցի շուրջը ստեղծւած տարակարծութիւնները բաւարար հիմք չեն կարող համարել կառավարութեան հրաժարականի համար: Միւս կողմից, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Սորհուրդը, բացի օրէնսդրականից իրագործում է նաեւ վարչական Փունկցիաներ, անխուսափելի են այս մարդի մէջ տեսակէտների բախումներ նրա եւ կառավարութեան միջեւ, որոնք, սակայն, այս վերջինի կողմից չպէտք է դիտւեն, որպէս անվստահութեան արտայայտութիւններ նրա ընդհանուր քաղաքականութեան հանդէպ եւ հրաժարականների առիթ չպէտք է ծառայեն: Ս. Կարճիկեանը իմ բացատրութիւնները լսելուց յետոյ, յայտնեց, որ ինքն էլ նոյն կարծիքին է: Ծանօթ լինելով նրա ունեցած ազդեցութեան կառավարութեան ու իր կուսակցութեան մէջ, ես բաժանեցի նրանից այն համոզումով, որ դահլիճի տաղնապը վերացւած է: Որքա՞ն մեծ եղաւ մեր զարմանքը, երբ հետեւեալ օրը յայտնի դարձաւ, որ Յ. Քաջաղնունին, այնուամենայնիւ, որոշել է հրաժարական տալ, եւ արդէն բանակցութիւնների է ձեռնարկել նոր կառավարութիւն կազմելու համար: Ստեղծւում էր, այսպիսով, բաւականին հետաքրքրական մի դրութիւն: Մենք, որ հարցապնդում էինք ներկայացրել ու բանաձեւ անցկացրել, յայտարարում էինք, որ դահլիճի տաղնապ չկայ, որ

կառավարութիւնը չէ տապալւած, իսկ դահլիճը ուղում էր անպատճառ իրեն տապալւած համարել ու պնդում էր իր հրաժարականի վրայ: Այս առաջին հայեացքից տարօրինակ երեւոյթի պատճառները ես բացատրել եմ վերը: Տաղնապը պէտք էր Դաշնակցութեան բարձրագոյն իշխանութեան մի նոր վերաբաշխում կատարելու համար, եւ այդ պատճառով էլ երբ առիթը ներկայացաւ, նա չուզեց բաց թողնել այն իր ձեռքից: Այսպէս թէ այնպէս, Յ. Քաջազնունին տւաւ իր հրաժարականը եւ մեր քաղաքական կեանքի օրակարգի մէջ անցաւ նոր կառավարութիւն կազմելու հարցը:

**

Նոր դահլիճի կազմութիւնը յանձնեց դարձեալ Յ. Քաջազնունին, որ, ցանկանալով կռաւիցիոն բնոյթ տալ իւ կառավարութեան, ձեռնակեց բանակցութիւնների միւս կուսակցութիւնների հետ: Այդ բանակցութիւնները շուտով պարզեցին, որ ընդդիմադիր կուսակցութիւններից երկուսը՝ հայ սոցիալ - դեմոկրատները եւ ժողովրդականները, դժբախտաբար, չէին հասկանում նշանակութիւնը ոչ Դաշնակցութեան մտայնութեան մէջ առաջ եկած փոփոխութեան եւ ոչ էլ այն նոր կացութեան, որ ստեղծւել էր դրա հետեւանքով հայ քաղաքական կեանքում: Ինչպէս վերը մատնանշեց, դահլիճի վերակազմութիւնը կատարւում էր միայն մէկ նպատակով՝ որպէսզի ապահովւի Դաշնակցութեան համար գերակշիռ դեր ու գերք երկրի բարձրագոյն իշխանութեան մէջ: Կարելի էր նպատակայարմար չհամարել Դաշնակցութեան այդ ձգտումը, կարելի էր պնդել այն տեսակէտի վրա, որ մինչեւ նոյեմբեր դոյութիւն ունեցող վիճակը արդարացրել է իրեն եւ չպէտք է փոփոխութեան ենթարկւի, այլ խօսքով ասած՝ կարելի էր առարկել նոր կառավարութիւն կազմելու անհրաժեշտութեան դէմ ու հրաժարւել մասնակցելու ծրագրող կռաւիցիային, բայց զնալ այդ կռաւիցիային ու պահանջել արտաքին եւ ներքին գործերի նախարարութիւնները եւ կամ նախարարական պաշտօնների մեծ մասը, այդ նշանակում է զուրկ լինել իրականութեան գիտակցութիւնից ու չհասկանալ, որ Դաշնակցութիւնը նրա համար չէ ձեռնարկել բարձրագոյն իշխանութեան ու դահլիճի վերակառուցման, որպէսզի այս վերջինը դառնայ Հայաստանի խորհրդի մի մանրանկարը ու այստեղ ձայների բաշխումը դարձեալ կատարւի «Հորիզոն»-ի դառն հեղինակների արժանացած այն դրութեամբ, երբ «վեցական տեղ են գրաւում այն կուսակցութիւնները, որոնք իրականութեան մէջ հնգական համախոհներ ունէին միայն»: Իսկ թէ որ 1918 թ. նոյեմբերի սկզբին կուսակցական ուժերի փոխարարութիւնները Հայաստանում չատ էլ հեռու չէր

«Հորիզոն»-ի վերոյիշեալ պատկերաւոր ձեւակերպութիւնից, պէտք է քաջութիւն ունենանք խոստովանելու:

Հայ ընդդիմադիր կուսակցութիւնները (մէկը աւելի, միւսը պակաս չափով) չկարողացան շօշափելի նաճումներ անել Հայաստանում անցած երեք ամիսների (օգոստ.-նոյեմբ.) ընթացքում: Այդ անյաջողութեան համար կային, ճիշտ է, առարկայական պայմաններ, որոնց մասին ես խօսել եմ նախկին յօդածիս մէջ, բայց կային, դժբախտաբար, նաեւ ենթակայական պատճառներ: Հայ ժողովրդականների ու սոցիալ - դեմոկրատների պարագլուխները, մի յանցապարտ թեթեամտութեամբ, շարունակեցին նստած մնալ Թիֆլիզում ու բնաւ չմտածեցին իրենց ընդունակութիւններն ի սպաս դրնել ուժեղացնելու համար իրենց կուսակցական կազմակերպութիւնները Հայաստանում: Այս տեսակէտով զարմանալի անփութութիւն յայտնադործեցին նամանականդ. հայ սոցիալ - դեմոկրատները, որոնք տեսնելով հանդերձ, որ վերջնականապէս տապալոււմ է իրենց կուսակցական դործը երեւանում, ոչ մէկ քայլ չարին դրա առաջն առնելու համար: Ինչ վերաբերում է սոցիալիստ - յեղափոխականներին, կարծում եմ, որ պատմական ճշմարտութեան դէմ մեղանշած չեմ լինի, եթէ ասեմ, որ թէեւ տւեալ ժամանակին նրանք էլ մեծ կազմակերպութիւն չկարողացան ստեղծել, սակայն իրենց կուսակցական դործը այնպիսի մի հիմունքների վրա դրին, որ կարողացան ապահովել նոր աստիճանական զարգացումը: Հետագայում, երբ հայ քաղաքական կեանքի հորիզոններից անհետացան հսդեկներն ու ժողովրդականները, սոցիալիստ - յեղափոխականները պահեցին իրենց դիրքերն ու դարձան միակ օպոզիցիան ընտրովի պարլամենտում:

Կոալիցիայի շուրջը տեղի ունեցող բանակցութիւնների ընթացքում պարզւեց, որ ընդդիմադիր խմբակներից սոցիալ - դեմոկրատներն ու ժողովրդականները ոչ միայն զուրկ են ստեղծած կացութեան ճիշտ պատկերացումից, այլ եւ շատ թիւր գաղափար ունեն կառավարական կոալիցիայի մասին: Նրանք կարծում էին, որ որքան շատ տեղ ունենան դահլիճում, այնքան մեծ կը լինի իրենց ազդեցութիւնը երկրի իշխանութեան մէջ: Չէին հասկանում, որ տարբեր բան է օրէնսդրական մարմինը եւ տարբեր՝ կառավարութիւնը, որ այս վերջինիս մէջ ազդեցութեան չափը կախած է - դոնէ Հայաստանի այն ժամանակաւ պայմաններում - միմիայն այն տեսակարար կշիռից, որ տւեալ կուսակցութիւնը ունի երկրում: Կարելի էր գրաւել ներքին ու արտաքին դործերի նախարարութիւնները, բայց այդ դործերի ընթացքի վրա աւելի քիչ ազդեցութիւն ունենալ, քան

նոյնիսկ դահլիճից դուրս մնացած, բայց զանգւածների 90 տոկոսը նւաճած կուսակցութեան կենտրոնի անդամը:

Այս կարեւոր խնդրի շուրջը ընդդիմադիր կուսակցութիւնների մէջ գոյութիւն ունէր տեսակէտների տարբերութիւն, որը եւ պատճառ դարձաւ նրանց կոալիցիայի հանդէպ ցոյց տաւ՝ վերաբերմունքի տարբերութեան: Ս. Վրացեանը իր «Հայաստանի Հանրապետութիւնը» գրքում (էջ 173) հետեւեալ ձեւով է ներկայացնում այդ տարբերութիւնը. «... Հ. Յ. Դաշնակցութեան կողմից արւած առաջարկի վրա սոց. — դեմ. եւ սոց. — յեղ. Ֆրակցիաները դրին ահլընյայտնի կերպով անիրագործելի պայմաններ. առաջինները պահանջեցին երկու տեղ եւ անպայման ներքին եւ արտաքին գործոց նախարարութիւնը. վերջինները իրենց համար առանձին պահանջներ չունէին, բայց վճռականապէս դէմ էին, որ արտաքին գործոց նախարարութիւնը յանձնւի ժողովրդականներին եւ ներքինը՝ սոցիալ-դեմոկրատներին»: Այստեղ փաստը ճիշտ է արձանագրւած: Անհատականալի է միայն թէ ինչո՞ւ Դաշնակցութեան համար անընդունելի էին նաեւ մեր պայմանները, որոնց համաձայն վէճի առարկայ եղող ներքին եւ արտաքին գործոց նախարարութիւնների հարցը լուծուում էր յօդուտ այդ կուսակցութեան: Մեր դիրքը շատ որոշ էր նոր կառավարութեան ու կոալիցիայի հանդէպ: Մենք գտնուում էինք, որ նախկին կարգը պէտք է շարունակւի, որ դահլիճի փոփոխութեան հարց չպիտի դրւի: Բայց կանգնած լինելով կատարւած փաստի առաջ եւ ընդունելով առաջարկ մասնակցելու կոալիցիոն դահլիճի մէջ, մենք չբաշխեցանք յայտնելու, որ առանձնապէս խանդավառւած չենք ոչ այդ կոալիցիայով եւ ոչ էլ նրա առաջ պարզուող հեռանկարներով: Եթէ խառն դահլիճը որեւէ նշանակութիւն ունէր այդ պահին, ապա միայն որպէս խորհրդանշող «ազգային միութեան»: Դրա համար պէտք էր, որ նրա մէջ մասնակցէին Խորհրդի մէջ ներկայացւած բոլոր կուսակցութիւնները: Երբ սոց. — դեմոկրատների ու ժողովրդականների չափազանցւած պահանջների պատճառով անհնարին դարձաւ ընդհանուր կոալիցիան, բնականաբար վերացաւ նաեւ դահլիճի մէջ մտնելու մեր առաջ դրւած հարցը: Ինձ թւում է, որ Դաշնակցութիւնն էլ առանձնապէս չէր փնտռում ձախ օպորտիւնիստ գործակցութիւնը, եւ դրանով պէտք է բացատրել այն փութկոտութիւնը, որով Յ. Քաջազնունին վերջացրեց մեզ հետ իր բանակցութիւնները եւ ձեռնարկեց կազմել նոր կառավարութիւն միայն դաշնակցականների եւ ժողովրդականների մասնակցութեամբ:

Նոյեմբեր 4-ին այդ նոր դահլիճը ներկայացաւ Հայաստանի Խորհրդին, որտեղ նա ունէր արդէն կայուն մեծամասնութիւն: Ընդ-

դիմադիր խմբակներին մէկը դարձել էր կառավարական կուսակցութիւն եւ օպոզիցիայի դիրքում մնում էինք այժմ միայն մենք եւ սոցիալ – դեմոկրատները: Ժողովրդականների ներկայութիւնը նոր կառավարութեան մէջ մէկ կողմից եւ այն բոլոր անցուդարձերը, որոնք նախորդեցին այդ դաշլիճի կազմութեան միւս՝ ստիպում էին մեզ տարբեր դիրք բռնել կառավարութեան հանդէպ: Եւ մենք լքեցինք ձեռնպահութեան քաղաքականութիւնը ու դէմ քէ տւինք Յ. Քաջազնունու երկրորդ դաշլիճին:

Իսկ ի՞նչ ստացւեց այդ խառն դաշլիճից: Մեր բոլոր յուետեսութիւնները արգարացան եւ արդարացան աւելի մեծ չափով, քան որ երեւակայում էինք: Աւելի արգահատելի, եթէ չասենք՝ այլանդակ, պատկեր դժար է երեւակայել, քան այն, որ պարզեց Հայաստանի առաջին կոալիցիոն դաշլիճը: Ոչ կառավարութեան ներսը եւ ոչ էլ Հայաստանի խորհրդում չստեղծւեց ոեւէ միութիւն դաշնակցականների ու ժողովրդականների միջեւ: Նրանք դորձեցին, պահելով իրենց նախկին դիրքերը ու նախկին վերաբերմունքը միմիանց հանդէպ. մի վերաբերմունք, որ, ինչպէս դիտենք, բնաւ բարեկամական չէր: Առանձնապէս մեծ հիասթափութիւն կրեցին ժողովրդականները: Նրանք համոզւեցին, որ սխալ է եղել իրենց այն կարծիքը, թէ զրաւելով մեծ թւով աթոռներ դաշլիճում, ձեռք կը բերեն նաեւ մեծ ազդեցութիւն երկրի իշխանութեան մէջ: Նրանք տեսան, որ այն խօսքը, թէ «լինում են այնպիսի քէջարկութիւններ երբ ձայները կշռւում են եւ ոչ թէ համարւում», Հայաստանի այն ժամանակաւ պայմաններում, միանգամայն համադատաւորանում էր իրականութեան: Բայց տեսնելով այս ամէնը, չկարողացան կամ աւելի ճիշտը չուզեցին հանել այն ճիշտ եզրակացութիւնը, թէ, նախ քան դաշլիճի մէջ աթոռներ գրաւելը, պէտք է քաղաքականապէս նւաճեն զանգաւանների համակրութիւնը, պէտք է նախեւառաջ դառնան ուժեղ կուսակցութիւն: Եւ չուզենալով դալ այս եզրակացութեան, որ նրանցից պահանջում էր տեւական եւ անհաճոյ աշխատանք, իրենց անյաջողութեան մեղքը փորձեցին բարդել Դաշնակցութեան վրա: Եւ ոչ մէկ ցանկութիւն չունեմ պաշտպանելու այս կուսակցութեան քաղաքականութիւնը յիշածս ժամանակաշրջանում, սակայն պէտք է յայտարարեմ այստեղ անայլա՛յլ, որ Դաշնակցութիւնից շատ աւելի ժողովրդականների վրա է ընկնում պատասխանատւութիւնը այն անյաջողութեան, որ ունեցաւ Յ. Քաջազնունու կոալիցիոն դաշլիճը, եւ մանաւանդ այն խաղըութեան, որ զուգորդեց այդ «կոալիցիայի» խղման:

Փարիզ.

